ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՐՑԸ

ՎՃՌՎՈՒՄ Է ՂԱՐԱԲԱՂՈՒՄ

Զրույց ՀՀ փախստականների հարցերի պետական վարչության պետ Վլադիմիր Մովսիսյանի հետ

- Ղարաբաղի վրա է կենտրոնացված Հայաստանի եւ սփյուռքահայության ուշադրությունը. որոնք ամեն գնով ուզում են նեցուկ կանգնել արցախցիներին. իրենց նյութական ու բարոյական օժանդակությամբ օգնել նրանց՝ պաշտպանելու հայրենիքը. վերականգնելու ավերված բնակավայրերը. վերստին հաստատվելու եւ ամրապնդվելու հայրենի հողի վրա: Այս գործում իր յուրահատուկ առաքելությունն ունի ՀՀ փախստականների հարցերով պետական վարչությունը: Պարոն Մովսիսյան. որո՞նք են Արցախում կատարվող ձեր աշխատանքների հիմնական ուղղությունները եւ ի՞նչ արդյունքների եք հասել մինչեւ հիմա:

- Պատերազմական գործողությունների հետեւանքով. մեր ունեցած հավաստի տվյալներով. Լեռնային Ղարաբաղում ավերվել է 11 հազար 760 տուն: Հայաստանի կառավարության հանձնարարությամբ մենք այնտեղ աշխատանքներ ենք տանում հիմնականում երկու ուղղությամբ: Առաջին. կամավոր սկզբունքներով իրենց մշտական բնակության վայրերն ենք տեղափոխում ԼՂՀ-ի բնակիչներին. որոնք բռնի տեղահանվել էին ու ապաստանել Հայաստանում եւ այլ վայրերում: Մինչեւ հիմա տեղափոխել ենք 39 հազար մարդ. եւ այդ աշխատանքները շարունակվում են: Մեր երկրորդ հիմնական աշխատանքը ԼՂՀ գյուղերում ավերված տների վերականգնումն է: Անցյալ տարի ուշ սկսեցինք այդ աշխատանքը հիմնականում սեպտեմբերից հետո ու մինչեւ տարեվերջ կարողացանք վերականգնել 303 տուն: Այս տարի ծրագրել ենք վերականգնել հազարը: Վերջերս ես եղա ԼՂՀ բոլոր շրջաններում. այն գյուղերում. ուր կատարվում են այդ աշխատանքները: Վիճակը հետեւյալն է. մինչեւ օգոստոսի վերջը շահագործման է հանձնվել 612 տուն: Մեր հաշվարկներով մինչեւ տարեվերջ այդ թիվը կհասնի 1018-ի: Ունենք աշխատանքային ծրագրեր. համապատասխան շինարարական կազմակերպություններ. որոնք իրականացնում՝ են այդ աշխատանքները:

- Իսկ խնդիրնե՞ր: Չէ որ ներկայիս պայմաններում շինարարություն իրականացնելը հազար ու մի դժվարությունների հետ է կապված:

- Կար հիմնականում երեք դժվարություն. որոնք իմ Ղարաբաղից վերադառնալուց հետո հաղթահարվել են: Առաջինը շինանյութերի հարցն էր: Արդեն ձեռք ենք բերել 200 տոննա ցեմենտ եւ սկսել առաքումը Ղարաբաղ. այնպես որ. շինարարական հրապարակներում այլեւս ցեմենտի կարիք չի զգացվի: Լուծել ենք ցեմենտ տեղափոխելու համար դիզելային վառելիք ձեռք բերելու հարցը: Ամենածանրը ֆինանսական խնդիրն է: Տարեսկզբից մինչեւ օգոստոսի մեկը կատարվել է 47 միլիոն դրամի շինարարական աշխատանք. որից վճարել ենք 24 միլիոնը: Ղարաբաղից վերադառնալուց հետո փոխանցել եմ 6 միլիոն դրամ. մնացածի հարցը կլուծվի մինչեւ սեպտեմբերի կեսերը. եւ ոչ մի շինարարական կազմակերպության պարտք չենք մնա:

- Նորոգումն ու վերականգնումը տարբեր հասկացություններ են: Ի՞նչ կարող եք ասել այն գյուղերի մասին. որոնք. ինչպես ասում են. վերացել են երկրի երեսից:

-Ամենաավերվածը. օրինակ. Հադրութի շրջանի Առաքյուլ գյուղն էր. այն հիմնահատակ քարուքանդ էր արված. ոչ մի տուն չկար. մնացել էր միայն կիսով չափ կանգուն եկեղեցին: Ուրախությամբ պետք է ասեմ. որ այսօր այնտեղ 20 տուն արդեն վերականգնված է. աշխատանքների մի մասը մենք ենք կատարում. մյուս մասը Ֆրանսիայի եւ Շվեյցարիայի բարեգործները իրենց միջոցներով. այստեղ են աշխատում նաեւ Գորիսի շինարարները: Մինչեւ տարեվերջ Առաքյուլում պատրաստ կլինի 30 տուն: Ինձ շատ ուրախացրեց. որ գյուղացիները ընտանիքներով եկել եւ ապրում են. ծուխ է բարձրանում. կանք են կատարում. անասուններ. թռչուններ են պահում. մի խոսքով գյուղը ապրում է. եւ դա ինձ համար ամենամեծ ոգեւորությունն է:

- Թալիշը Ղարաբաղի ամենախոշոր գյուղերից է ու նաեւ ծայրամասային. նրա հողահանդակները. արոտավայրերը. անտառները տարածվում են մինչեւ Շահումյանի շրջանի Գյուլիստան եւ Կարաչինար գյուղերը: Բայց Թալիշը հիմա գտնվում է ռազմաճակատային գծում. վերադարձողներ եղե՞լ են. չե՞ն երկյուղում:

- Գյուղը վերջերս է ազատագրվել. եւ մոտ 30 մարդ եկել ապրում է: Սոցիալ-կենցաղային հարցեր կան. որոնք մի քանի օրում կլուծենք. իսկ ավտոմեքենաներով ապահովել է ԼՂՀ պաշտպանության պետական կոմիտեն: Այդ կոմիտեն հատուկ ծրագիր է ընդունել Թալիշ գյուղի վերականգնման վերաբերյալ: Շատ ուրախ եմ. որ մենք նույնպես աշխատում ենք այնտեղ: Ես նորից Թալիշ պետք է գնամ սեպտեմբերի 24-ին: Ծրագրում ենք այնտեղ ստեղծել մի հզոր շինարարական կազմակերպություն. եւ եկող տարի. ինչ գնով էլ լինի. վերականգնել առնվազն 150 տուն: Իսկ գյուղը ունեցել է վեց հարյուր տուն. խոշոր գյուղ էր ամենահզոր հողային հնարավորություններով: Ուրախալի էր տեսնել առաջին վերադարձածների նվիրվածությունը. հայրենասիրությունը:

Մարտակերտի շրջանի չորս գյուղ. որոնցից խոշորներն են Մարաղան եւ Չայլուն. դեռեւս ադրբեջանցիների ձեռքում են. իսկ նախկին ադրբեջանաբնակ Ումուդլու գյուղում. որը գտնվում է Սարսանգի ջրամբարի մոտ. բնակվում են Շահումյանից բռնագաղթվածները: Այս գյուղում մեր վարչությունը վերականգնել է 25 տուն. եւ շինարարական աշխատանքները շարունակվում են: Դրանք հաջող են ընթանում Գեղավան. Վաղուհաս եւ այլ գյուղերում: Գոհ չեմ Խունկութալա գյուղի վիճակից: Գտնում ենք. որ Չափարում աշխատանքները կակտիվացնի Զարենցավանի շինարարական տրեստը. որը առաջիկայում 5 տուն կվերականգնի այդ գյուղում: Ինձ ոգեւորեցին Ասկերանի շրջանում տարվող աշխատանքները: Շատ ուրախ եմ. որ Շուշիի շրջանի Բերդաձորի հատվածում ոչ միայն տներն ենք վերականգնել. այլեւ լուծել ենք երկու գյուղի

ջրամատակարարման հարցը: Մի խոսքով. հիմնականում գոհ եմ կատարված աշխատանքներից: Կան նաեւ հապաղումներ: Դրանց պատճառներից մեկն այն է. որ տեղական շինարարների մի մասն զբաղված է բերքահավաքի աշխատանքներով. իսկ ամենակարող ուժերը. հասկանալի է. գտնվում են պաշտպանության դիրքերում: Պայմանավորվածություն ունենք Պաշտպանության պետական կոմիտեի հետ աշխատանքներն ակտիվացնելու վերաբերյալ: Հաստատ համոզված եմ. որ մինչեւ տարեվերջ մենք Արցախում կվերականգնենք ավելի քան հազար տուն:

- Պարոն Մովսիսյանի ասածին ավելացնեմ. որ ավերված 11 հազար 760 տների ու բնակարանների վերականգնումով զբաղված են նաեւ Հայաստանի եւ Արցախի այլ շինարարական կազմակերպություններ:

Վերջում ես կցանկանայի դիմել Երեւանում. Հայաստանի շրջաններում եւ Ռուսաստանում դեգերող փախստականներին. ոչ մեկի հողը ձեզ համար հայրենիք չի դառնա: Որպեսզի ապարդյուն չանցնի ձեր եղբայրների թափած սրբազան արյունը. որպեսզի արդարանան Արցախին նեցուկ կանգնած ամբողջ հայության հույսերը. եւ Ղարաբաղի հաղթանակը կատարյալ լինի. վերադարձեք. տեր կանգնեք ձեր տունուտեղին. ձեր գյուղերին. ձեր պապերի գերեզմաններին: Որքան էլ խոշոր տերությունները միջամտեն. մեկ է. Ղարաբաղի հարցը ղարաբաղցիներն են վճռում. եւ Ղարաբաղում է վճռվում:

ՄԱՎՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ